Հաստատվել է ՀՀ վարչապետին
առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի
19 հունիսի 2010թ. նիստի N 1 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի աշխատակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի (այսուհետ՝ Աշխատակարգ) նպատակն է առավել արդյունավետ դարձնել Խորհրդի աշխատանքները և կանոնակարգել Խորհրդի աշխատանքներին վերաբերող և Խորհրդի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը:

2. Խորհրդի օրակարգը և նիստերը

2. Խորհրդի օրակարգի նախագիծը քննարկվում է Խորհրդի նախագահի, Խորհրդի նախագահի տեղակալի և Խորհրդի քարտուղարի կողմից: Տեղի ունեցած քննարկումների արդյունքում Խորհրդի քարտուղարը նախապատրաստում է նիստի օրակարգի նախագիծը և Խորհրդի նիստից առնվազն հինգ օր առաջ ապահովում օրակարգի նախագծի և կից փաստաթղթերի առաքումը Խորհրդի անդամներին:

3. Նիստի օրակարգը հաստատվում է Խորհրդի նիստում:

4. Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է հանդես գալ Խորհրդի նիստի օրակարգում համապատասխան հարց ներառելու առաջարկությամբ: Օրակարգի նախագծում հարցը ներառելու համար անհրաժեշտ է նախապես առաջարկությունը համապատասխան հիմնավորումներով, առաջարկվող որոշման նախագծով ներկայացնել Խորհրդի քարտուղարին: Խորհրդի անդամը նիստի ընթացքում Խորհրդի օրակարգը հաստատելու ժամանակ կարող է նույնպես հանդես գալ համապատասխան առաջարկություններով:

5. Օրակարգի յուրաքանչյուր հարց պետք է ունենա հիմնական զեկուցող, որը կարող է չհանդիսանալ Խորհրդի անդամ և մասնակցել Խորհրդի նիստին խորհրդակցական ձայնով՝ խորհրդի նախագահի հրավերով: Հիմնական զեկուցողին ելույթի համար տրամադրվում է մինչև 10 րոպե, այնուհետև նրան կարող են տրվել հարցեր, որից հետո տեղի է ունենում քննարկում:

3. Աշխատանքային խմբեր

6. Խորհուրդը առանձին հարցերի քննարկման կամ որոշակի աշխատանքներ կատարելու նպատակով ստեղծում է աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբի ղեկավար կարող է լինել միայն Խորհրդի անդամը, իսկ աշխատանքային խմբերում խորհրդի անդամի առաջարկությամբ կարող են ընդգրկվել Խորհրդի անդամ չհանդիսացող անձինք՝ փորձագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պետական մարմինների աշխատակիցներ և այլն:

7. Աշխատանքային խմբերը համապատասխան աշխատանքներ ծավալելուց հետո խորհրդի նիստում հանդես են գալիս հաղորդմամբ:

4. Խորհրդի աշխատանքները

8. Խորհրդի աշխատանքները կազմակերպվում են տարեկան գործունեության ծրագրի համաձայն, որը հաստատվում է Խորհրդի կողմից:

9. Խորհրդի աշխատանքները արդյունավետ իրականացնելու նպատակով Խորհուրդը կարող է դիմել հանրապետական գործադիր մարմիններին՝ երիտասարդական քաղաքականության տարբեր հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն, ամփոփ հաշվետվություն կամ զեկույց ներկայացնելու առաջարկով:

10. Յուրաքանչյուր տարվա աշխատանքները ամփոփելուց հետո Խորհուրդը հանդես է գալիս համապատասխան հաշվետվությամբ:

11. Խորհրդի նիստերի արձանագրությունները, որոշումները, հաշվետվությունները և այլ փաստաթղթեր հրապարակվում են համապատասխան համացանցային կայքում: